

Խոսքային պատրաստի կաղապարները Էլեկտրոնային մամուլի լեզվում

Անուշ Խաչատրյան

Հանգուցային բառեր. *լրագրային ստանդարտ, դրոշմ, ԶԼՄ, թվայնացած խոսույթ, հրապարակախոսական ոճ, ոչ վերախմբման ստավորված կայուն բառակապակցություններ, բաղադրյալ անվանումներ*

Նախաբան

Տեղեկատվական տեխնոլոգիաների արդի դարաշրջանն իր պահանջներն է թելադրում մանրային կյանքի բոլոր բնագավառներին, պարտադրում համընթաց զարգացում: Բացառություն չէ նաև ցանցային ոլորտը: Ինչպես նշել է Վ. Մայերը, լրագրողները վկան են տեխնիկական հեղափոխության երկրորդ մասի, որը ստիպողաբար և սաստիկ փոխում է նրանց մասնագիտությունը. «Հիմա գալիս է սարքերի մի նոր սերունդ, որն ավելի հզոր է, ավելի արագ է արտադրում և լրագրողներից ավելին է պահանջում»¹: Արդի հասարակության տեղեկատվական պահանջումների բավարարումն այսօր մեծապես իրականացնում է էլեկտրոնային մամուլը: Սեղմությունը, քիչ բառերով լիարժեք իրազեկություն հաղորդելը, արագորեն իրազեկելը, ժամանակակից ընթերցողի՝ լայնածավալ նյութերը բաց թողնելու հակվածությունը անխուսափելի են դարձնում թվայնացած խոսույթում պատրաստի միավորների կիրառությունը: «Լրագրային խոսքում ավելի շատ, քան գործառական այլ ոճերում, անհրաժեշտություն է զգացվում լակոնիկ և հստակ արտահայտված մտքերի: Դրանցից շատերը, մշակվելով և հաճախ գործածվելով, քարանդակ են, վերածվում խոսքի պատրաստի արտահայտությունների»²: Հրապարակախոսական ոճին բնորոշ է տեղեկատվության և ներգործման համադրումը, և եթե ներգործելու համար կիրառվում են հուզարտահայտչական լեզվամիջոցներ, ապա տեղեկատվական գործառույթն իրականացնելիս պահանջ է զգացվում ավելի շատ չեզոք ձևակերպումների, և այս դեպքում անհնար է խուսափել պատրաստի կաղապարներից: Առաջ է գալիս է կաղապարարտահայտչական միավորներ հերթականությունը:

¹ Վ. Մայեր, Լրագրային գործ, Երևան, 2001, էջ 1:

² Ռ. Շալունց, Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Երևան, 1987, էջ 113:

Ստանդարտ, դրոշմ, կաղապար

Մամուլի լեզուն ուսումնասիրած մասնագետները խոսքային պատրաստի կաղապարներին տվել են ստանդարտ և դրոշմ (շտամպ) անվանումները³: Բառարաններում «ստանդարտ» բառի դիմաց հանդիպում ենք հետևյալ բացատրություններին՝ ***տիպօրինակ, չափանշվածք, կայունաձևություն, մշտակաղապար, միօրինակություն, շաբլոն***, անգլ. *to stand, կայուն լինել. որևէ բանի նմուշ, օրինակ, որին պիտի համապատասխանի արտադրանքը կամ մշակվածքը իր ձևով, չափով, որակով նն, հասօրինակ, փխբ. որևէ բանի կազմակերպման՝ իրագործման նն միօրինակ բնույթ՝ եղանակ, փխբ. շարունակ կրկնվող միօրինակությունը, անփոփոխ՝ մաշված ու միօրինակ բան, շաբլոն, տրաֆարետ*։ Բաց թողնելով «դրոշմ» բառի առաջնային իմաստը՝ հասնում ենք մեզ հետաքրքրողին, որը ներկայացված է իբրև փոխաբերական իմաստ՝ **Որևէ բանի արտահայտությունը հանդիսացող որոշակի նշան՝ բնորոշ գիծ**⁴: Ըստ Ռ. Շալունցի «ստանդարտն ապահովում է խոսքի գեղագիտական կողմը, կիրառվում է գնահատողական գործառույթամբ»⁵: Իբրև «ստանդարտային» ձևերի օրինակներ նա բերում է նաև կայուն, ոչ վերաիմաստավորված բառակապակցությունները: Յ. Դավթյանը լրագրային դրոշմներից դուրս է թողնում այդ միավորները: Միանգամայն այլ բնորոշում են տալիս ռուս հետազոտողները⁶: Խոսքային դրոշմները ռուս մասնագետները համարում են կարծրատիպ արտահայտություններ՝ մեխանիկորեն վերարտադրելի բնորոշ համատեքստերում և իրավիճակներում, կաղապարային (շաբլոն) արտահայտություններ: Կոստոմարովը դրոշմը նույնացնում է դարձվածային միավորի հետ (իդիոմ, մետաֆորա)⁷: Ըստ Շ. Բալլիի՝ դրոշմները պատրաստի արտահայտություններ են, հաճախ նաև ոչ մեծ ամբողջական նախադասություններ, որոնք մասամբ համապատասխանում են թևավոր արտահայտություններին, որոնք գերմանա-

³ Ռ. Շալունց, նշվ. աշխ., Յ. Դավթյան, Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Երևան, 2006, Հ. Ղուկասյան, Արդի մամուլի լեզուն, Ատենախոսություն, Երևան, 2009:

⁴ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%A4%D6%80%D5%B8%D5%B7%D5%B4:

⁵ Ռ. Շալունց, նշվ. աշխ., էջ 117:

⁶ Տե՛ս Գ. Винокур, Язык нашей газеты, М., ЛЕФ 1924, но. 2(6), էջ 117-140:

⁷ Տե՛ս Գ. Костомаров, Русский язык на газетной полосе: Некоторые особенности языка современной газетной публицистики М., 1971, էջ 165-203:

ցիներն անվանում են **geflügelte Worte (թևավոր բառեր)**: «Հաճախակի գործածության պատճառով դրանք ամբողջովին կորցնում են արտահայտչականությունը, բայց, այնուամենայնիվ, որոշ դեպքերում կարող են վերածվել ինքնատիպ արտահայտությունների»⁸: Խոսքի մեջ դրանք հաճախ կիրառվում են անփոփոխ ձևով և շատ են կրկնվում: Ստանդարտի տարբերակիչ հատկություններ են նշվում վերարտադրելիությունը, մենիմաստությունը և չեզոք կանոնարկիչ գունավորումը: Ստանդարտից դրոշմ անցումը կատարվում է կանոնարկված չեզոքության կորստով⁹: Անգլերենում այս միավորները մտցված են **phrase**-ների (արտահայտություն) մեջ:

Կարծում ենք՝ նպատակահարմար է նշված իմաստների համար կադապար տերմինի օգտագործումը: Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Կադապարն ընդհանրապես առարկայի (օբյեկտի) ընդօրինակումն է... Հասկանալի է, որ մարդու գլխում կան լեզվական որոշակի կադապարներ, որոնց բաղադրիչ բջիջները լրացվում են մեկ այս, մեկ այն կոնկրետ միավորներով՝ ըստ իրադրությունից բխող անհրաժեշտության: Լեզվաբանական կադապարը լեզվական միավորների (վանկերի, բառերի, շարվյթների, նախադասությունների և այլն) կառուցվածքային բաղադրիչների միջուկային և առմիջուկային տիպերի քա նա կի, հաջորդականության և պարտադրականության նշանակումն է»¹⁰: Կադապարը՝ իբրև կայունության միտող բառակապակցություն, ՋԼՄ-ների լեզվի անհրաժեշտ բաղադրիչներից է: Լրատվական ժանրերում, որոնցում նպատակը լեզվական նվազագույն միջոցներով հնարավորին չափ հարուստ տեղեկույթ հաղորդելն է, կադապարային արտահայտության գործածությունը դիտվում է լեզվական յուրահատկություն¹¹:

Տարածված կադապարներն էլեկտրոնային լրագրանյութերում

Էլեկտրոնային արդի մամուլում, որտեղ լրահոսը թարմացվում է ակնթարթորեն, անխուսափելի է դառնում նշված միավորների գործածությունը: Կադապարներն ավելի տարածված են տեղեկատվական ժանրերում՝ արտահայտված ինչպես բառակապակցություններով, դերբայական

⁸ Տե՛ս Ս. Балли, Французская стилистика, М., 1961, էջ 109:

⁹ Տե՛ս Ի. Лысакова, Журналист, пресса, аудитория. Межвузовский сборник, Ленинград, 1991, изд-во ЛГУ, էջ 67–77:

¹⁰ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 6:

¹¹ Յ. Ավետիսյան և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016, էջ 375:

դարձվածներով, այնպես էլ միակազմ ու երկկազմ, համառոտ ու ընդարձակ նախադասություններով: Բերենք օրինակներ. «Մամուլի տեսություն» բաժնում գետեղված նյութերում հիմունքի պարագայի պաշտոնով հաճախադեպ են հետևյալ կառույցները՝ «*Կառավարությունից ստացած տեղեկությունների համաձայն*», «*Ըստ տարածվող լուրերի*», «*ԱԳՆ-ում (Կառավարությունում, ԱՄ-ում ևն) մեր աղբյուրի փոխանցմամբ*», «*Հավաստի (քաջատեղյակ, լավատեղյակ) աղբյուրների փոխանցմամբ*», ամբողջական նախադասություններով ասացական որևէ բայի առկայությամբ՝ «*Բնչպես հայտնում են (փոխանցում են, տեղեկացնում են, պնդում են) լավատեղյակ աղբյուրները*», «*Կառավարությանը մոտ (կանգնած-անհանձնարարելի) աղբյուրները հայտնում են*», «*Լավատեղյակ աղբյուրներից մեզ հայտնի դարձավ*», դերբայական դարձվածներով՝ «...ը, վկայակոչելով իր աղբյուրներին, հայտնում է», «*Դատելով վերջին դեպքերից....*», «*Հաշվի առնելով....*», «*Բրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով....*»: Մամուլի ասուլիսների լուսաբանություններում գրեթե միշտ, հիմնականում՝ երկրորդ նախադասության մեջ, հանդիպում է հետևյալ կաղապարը. «*Այս մասին լրագրողների (լրատվամիջոցների) հետ զրույցում (հարցազրույցում) ասել է (բանախոսի պաշտոնը, անունը)*»: Տարբեր աղբյուրներից վերցված նյութերում՝ կրկին երկրորդ նախադասության մեջ, տարածված է. «*Այս մասին ասվում է (հայտարարություն է տարածել, տեղեկությունը հաստատել է, տեղեկանում ենք, հայտնում է)-ուղղական, բացառական, ներգոյական հոլովով որևէ գոյական*» կաղապարը: Այլ աղբյուրներից տեղադրված նյութերը սովորաբար ավարտվում են հետևյալ կաղապարներով. «*Ավելի մանրամասն՝ սկզբնաղբյուր կայքում*», «*Նյութն ամբողջությամբ կարդացեք բնօրինակ կայքում (այստեղ)*», «*Աղբյուրը՝ (կայքի անվանումը)*»: Հանրացանցերից տեղադրված գրառումներն ավարտվում են «*(անուն ազգանուն)-ի ֆեյսբուքյան էջից*» կաղապարով: Նման միավորները սովորաբար գերհղումներով են ձևավորվում՝ ընթերցողին նյութնանմիջապես սկզբնաղբյուրում կարդալու հնարավորություն տալով: Տեսանյութ և լուսանկարներ պարունակող լուրերում օգտագործվում են «*Տեսանյութը և լուսանկարները՝ ստորև*», «*Տեսանյութն ու լուսանկարները՝ ըստ ...-ի (....-ի կայքից,էջից)*», հանրացանցերից վերցված նյութերում՝ «*Տարածելը խրախուսվում է*», թարմացվող լուրերում՝ «*Մանրամասները՝ քիչ անց*» կաղապարներով: Թերթից թերթ ակնթարթային անցումներ ապահովող գերհղումներով են ձևավորվում նաև հիշեցումները. «*Ավելի վաղ հայտնել էինք, որ*», «*Բնչպես ավելի վաղ գրել էինք (տեղեկացրել էինք)....*» և այլն:

Մեռնողներին երանի պիտի տանք, քանի դեռ անկարող ենք դառնալ մարդուց անհատականություն և ազգ ժողովրդից:

Վահե Եփրիկյանի ֆեյսբուքյան էջից

Նկար 1. 7or.am

Վթարի վայր ժամանած քննիչի հանձնարարականով ավտոմեքենան տեղափոխվել է Երեւանի ճՈ պահպանվող հատուկ տարածք:

Կայքի տեղեկություններով՝ վարորդն ու վիրավորը նշանադրվածներ են:

Առավել մանրամասն սկզբնաղբյուր կայքում

Նկար 3. news.am

«Իրավունքին» հասած լուրերի համաձայն՝ երկու կողմերն էլ չեն ուզում գործին իրավական ընթացք տրվի, եւ, ըստ Գորիսում շրջանառվող լուրերի, փորձում են հարթել միջադեպը, որովհետեւ որեւէ կողմի ձեռնտու չէ այս գործի հետագա ընթացքը:

Բայց նաեւ բոլորը գիտեն, թե ինչ է տեղի ունեցել, ու քանի որ դեռ որեւէ մեղադրյալ չկա, ապա զգացվում է, որ իրավապահներն էլ առանձնապես իրենց չեն կոտորում գործը բացելու համար»:

Առավել մանրամասն՝ թերթի այսօրվա համարում

Նկար 4. iravunk.com

Shamshyan.com-ի փոխանցմամբ՝ վիրավորներին առաջինը օգնության են հասել քաղաքացիները: Տուժածները հոսպիտալացվել են:

Մանրամասները՝ սկզբնաղբյուր կայքում:

Նկար 2. shabat.am

Պատրաստի այս միավորների դերն անգնահատելի է նաև վերնագրեր կազմելիս լայնորեն շրջանառվելով՝ կաղապարների են վերածվել հետևյալ վերնագրերը¹²՝ «Օրվա ֆուտբոլային հանդիպումները» (հանդիպումների ծանուցում), «Լուրեր Հայաստանից և աշխարհից՝ մեկ տողով», «ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը», «Նավթի գները նվազել են», «Եվրոպական ինդեքսները չեն փոխվել», «Թանկարժեք մետաղների գները», «Պլանային հոսանքազրկումներ Երևանում և մարզերում», «Վթարային ջրանջատում», «Երկար ժամանակով լույս (ջուր) չի լինելու», «Եղանակը Հայաստանում», «Սպասվում են տեղումներ», «Բողոքի ակցիա կառավարության դիմաց», «(թվական) մահ մեկ օրում. կորոնավիրուսով վարակվելու (թվական) նոր դեպք է արձանագրվել Հայաստանում», «Վարչապետը նոր նշանակումներ է արել», «ԱԺ արտահերթը՝ ուղիղ միացմամբ», «Կառավարության նիստը՝ ուղիղ», ուղիղ հեռարձակումների ժամանակ վերնագրում սովորաբար նշվում է թարմացվող, թարմացվում է, թարմացված, լրացված լուրերում սովորաբար նշվում է՝ «Նոր մանրամասներ... գործով (դեպքից)»:

Չնայած հարաբերական կայունությանը՝ խոսքային կաղապարները, բառապաշարի զարգացմանը զուգահեռ, թարմացվում են, համալրվում լեզվի տարբեր ոճերում կիրառվող տարատեսակ բաղադրյալ անվանումներով՝ կայուն, չվերաիմաստավորված, անվանողական դեր կատարող բառակապակցություններով¹³, որոնք հասարակական-քաղաքական բովանդակություն են ստանում: Տեղի են ունենում գործառական ոճերի ոչ միայն փոխներթափանցումներ, այլև «փոխատեղություններ». պաշտոնական խոսքի հրապարակային արտառոց դրսևորումների, գեղարվեստական ոճի նահանջի պայմաններում ՁԼՄ-ները հայտնվել են առաջնային հարթակներում և գերակայություն հաստատել նաև լեզվի որակական անցումների վրա¹⁴:

Մամուլի լեզվում տարածված կայուն կապակցությունները կարելի է խմբավորել ինչպես ըստ **մասնագիտական ոլորտների** (հասարակական–

¹² Վերնագրերի լեզվի մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Խաչատրյան, Էլեկտրոնային մամուլի հրապարակումների վերնագրերի լեզվական առանձնահատկությունները // Բանբեր Երևանի Վ. Բոյունովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1(54), Երևան, 2020, էջ 73-85:

¹³ Տե՛ս Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Երևան, 1990, էջ 20:

¹⁴ Լ. Սարգսյան, ՁԼՄ-ների լեզուն և արդի հայերենի բառապաշարի զարգացման միտումները // ԲԵՇ, Երևան, 2020, 2 (32), էջ 83-92:

քաղաքական՝ դիվանագիտական ներկայացուցչություն, պարտվողական քաղաքականություն, ապակառուցողական դիրքորոշում, մշակութային՝ սարսափ ժանր, երկրորդ պլանի լավագույն դերասան, թատերական փառատոն, գրքի շնորհանդես, ռազմական՝ ականանետային մարտկոց, կրակի դադարեցում, նախահարձակ գործողություններ, ռազմական ազդեսիա, տնտեսական՝ երկնիշ տնտեսական աճ, նվազագույն սպառողական զամբյուղ, պարտքային բեռ, տարեկան շահութահարկ, իրավական՝ իրավաբանական (ֆիզիկական) անձ, օրենքով գող, օրենսդրական ակտ, մարզական՝ չեմպիոնների լիգա, որակավորման փուլ, գավաթի մրցաշար, պատասխան հանդիպում), այնպես էլ ըստ **բաղադրիչների շարահյուսական հարաբերության՝ որոշիչ-որոշյալ՝ հիմնարար սկզբունքներ**, դիվանագիտական լուծում, միջազգային հանրություն, տարածքային ամբողջականություն, գոյութենական վտանգ, ռազմական օգնություն, դուստր ձեռնարկություն, հրապարակային դիրքորոշում, կանոնավոր չվերթներ, միասնական քննություններ, մանրէաբանական ցուցանիշներ, միջուկային գործարք, առևտրային նստաշրջան, շուտափույթ հանգուցալուծում, հարկային օրենսդրություն, դիրքային առաջխաղացում, հակամենաշնորհային կարգավորիչ, արտաքին (պետական) պարտք, զբոսաշրջային հոսք, վարկավորման տոկոսադրույք, լողացող կուրս, սպառողական վարկ, **բառակապակցությամբ արտահայտված որոշիչներ՝ շահույթ չհետապնդող գներ**, հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակ, ուժի դիրքերից վարվող քաղաքականություն, **հատկացուցիչ-հատկացյալ՝ զսպվածության կոչ**, կրակի դադարեցում, աշխատուժի հոսքեր, հաշիվների սառեցում, մամուլի տեսություն, **խնդրային հարաբերություն**՝ հավատարիմ մնալ հանձնառությանը, շարունակել միջնորդական ջանքերը, մեկտեղել ջանքերը, խաղաղարար նախաձեռնություն ցուցաբերել, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները, բարելավել դիրքերը, ամրապնդել համագործակցությունը, **պարագայական հարաբերություն՝ ուշադրությամբ հետևել**, **քերականական տարբեր հարաբերություններ արտահայտող բազմաբաղադրիչ կառույցներ՝ շփման գծի ողջ երկայնքով**, արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար, նոր շուկաների հասանելիության ընդլայնում, անշարժ գույքի շուկա, գերակա դիրքի չարաշահում, արտադրական կարողությունների զարգացում, արտահանումների տարեկան ծավալ, կապիտալի ազատ տեղաշարժ, **ամբողջական նախադասություններ՝ համառոտ և ընդարձակ՝ վերցված տարբեր գերատեսչություններից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից՝ «ՀՀ**

ՊՆ-ն *հորդորում է ձեռնպահ մնալ* հայկական մարտական տեխնիկայի շարժի մասին տեսանյութերի տարածումից» (armenpress.am, 27.09.2020), «Մահմանին միջադեպ է գրանցվել» (factor.am, 05.06.2021), «Հակառակորդի առաջխաղացման փորձը կասեցվել է» (lragir.am, 02.11.2020), «Ադրբեջանական կողմին պահանջ է ներկայացվել տարածքն անհապաղ լքել և իրենց ելման դիրքեր վերադառնալ» (hetq.am, 13.05.2021), «Իրավիճակն ամբողջությամբ գտնվում է ՊԲ վերահսկողության տակ» (azatityin.am, 10.10.2020), «ՀՀ ՊՆ-ն բացահայտ սադրանք է որակել... ձեռնարկված գործողությունները» (aliqmedia.am, 13.05.2021), «ՀՀ ՊՆ-ն կիսում է կորստյան ծանր վիճակը և զորակցություն հայտնում ..-ի ընտանիքի անդամներին, հարազատներին, ծառայակիցներին» (azatutyun.am, 14.07.2020), «Հայկական ԶՈՒ ստորաբաժանումները լիարժեք վերահսկում են իրադրությունը» (a1plus.am), «...ից հետո ստեղծված իրադրությունն էական փոփոխությունների չի կրել» (factor.am, 21.05.2021) և այլն:

Մեծաթիվ են **հարադրավոր բաղադրությունների** արժեք ստացած կառույցները՝ *կոչ անել, հարց բարձրացնել, կասկած հարուցել, դժգոհություն* (մտավախություն, համոզմունք, վստահություն, կասկած) հայտնել, միջնորդություն ներկայացնել, չեղյալ հայտարարել, մտահոգություն (կարծիք) հայտնել, գնահատական տալ:

Լրագրային կադապարների բնորոշ առանձնահատկություններից է մենիմաստությունը, հեղինակային կնիքից զուրկ լինելը, մատչելիությունը հասարակության մեծ մասին: Կադապարի ընտրությունն ամենից առաջ պայմանավորված է լրագրային ժանրով ու թեմատիկայով: Կադապարայնացած են նաև իրավական ոլորտին առնչվող նյութերը: Ոստիկանության (police.am), քննչական կոմիտեի (investigative.am), հատուկ քննչական ծառայության (ccc.am) կայքերից մեջբերված տեքստերում հաճախադեպ են հետևյալ կադապարները՝ *դեպքի առթիվ քրգործ է հարուցվել հատկանիշներով, պարզվում են հանգամանքները, բերման է ենթարկվել, նախաքննությունը շարունակվում է, կատարվում է նախաքննություն, ահազանգ է ստացվել, դեպքի վայրում են ոստիկանության ծառայողներն ու շտապօգնության բրիգադը, վիճակը գնահատվում է միջին ծանրության, ՔԿ-ն մանրամասներ է հայտնում, ...-ը միջնորդություն է ներկայացրել, պաշտպանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերացում, որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին, դատարանի որոշմամբ, քրեական հետապնդումը դադարեցվել է, ըստ մեղադրական եզրակացության,ում իրականացված ուժեղացված ծառայության ընթացքում, ոստիկանների*

բացատրական աշխատանքների շնորհիվ, դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն (տարվում է ծառայողական քննություն), ոստիկանության ... բաժնի ծառայողների օգնությամբ, վերնագրերում՝ «Մահվան ելքով վրաերթ», «Մեկ օրում արձանագրվել է ...դեպք», «... իրավապահների կողմից հետախուզվում էր գողության մեղադրանքով», «Հետախուզվողի հայտնաբերում», «Բացահայտվել են ՃՈ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու, պաշտոնեական կեղծիք կատարելու, ինչպես նաև կաշառք տալու և կաշառքի միջնորդության դեպքեր. մեղադրանք է առաջադրվել 15 անձանց», «Առանձնապես խոշոր չափերով յուրացում կամ վատնում», «Զենք-զինամթերքի կամավոր հանձնումը շարունակվում է», «Օպերատիվ իրավիճակը հանրապետությունում» են: ՔԿ-ից, ՀԲՕ-ից վերցված նյութերն ավարտվում են ծանուցմամբ, որն արդեն կադապարի է վերածվել՝ Օանուցում՝ ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Կադապարների են վերածվել դիվանագիտական խոսույթում լայնորեն կիրառվող հետևյալ կառույցները՝ «ՀՀ ԱԳՆ-ն Իսրայելին ու Պաղեստինին զսպվածության կոչ է արել» (Iragir.am, 11.05.2021), «ՀԱՊԿ-ում ուշադիր հետևում են հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակի զարգացմանը» (aravot.am, 19.05.2021), «ԱՄՆ Պետդեպը մտահոգություն է հայտնել դարաբաղա-ադրբեջանական գորքերի շփման գծում իրավիճակի սրման առնչությամբ» (arminfo.info, 22.06.2017), «ԵԱՀԿ ՄԽ-ն կոչ է անում Երևանին և Բաքվին վերսկսել բանակցությունները՝ առանց նախապայմանների» (hetq.am, 14.04.2021), «Ռուսաստանն ակտիվ ջանքեր է գործադրում Սյունիքի իրավիճակի հանգուցալուծման համար» (armenpress.am, 26.06.2021), «Կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակել երկկողմ փոխգործակցության ամրապնդումը» (yerkirmedia.am, 09.01.2019), «ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորումն այլընտանք չունի. Զալբեր» (civilnet.am, 06.07.2016), «ՌԴ-ն անյուրախ էր երկրի է համարում ԼՂ հարցի ռազմական լուծումը» (tert.am, 26.10.2020), «Շարունակվում են իրավիճակի կարգավորմանն ուղղված բանակցությունները» (168.am, 03.06.2021): Դիվանագիտական ենթառճում հաճախ անհրաժեշտ է լինում խոսել, բայց ոչինչ չասել, գեղեցիկ շարադրված, ոճական ու քերականական սխալներ չունեցող շատ նախադասություն-

ներ անհասկանալի են մնում ընթերցողին: Իհարկե, արտաքին քաղաքականության մեջ երբեմն հարկ է լինում գործածել ընդհանուր ձևակերպումներ, որոնցից միայն պետք է լինում կռահել, թե ինչի մասին է խոսքը¹⁵:

Խոսքային կաղապարները լայնորեն կիրառվում են նաև օրենսդիր և գործադիր մարմինների նիստերի արձանագրություններում՝ «*Կառավարության նիստի օրակարգում ընդգրկվել է հարց», «Նախագիծն ընդունվեց առաջին ընթերցմամբ»* (civilnet.am, 19.05.2020): Հանրածանոթ լրագրողական այս գործիքն օգնում է մատչելի ձևով նշակարգելու (կողմովորել) տեղեկատվությունը տարասեռ լսարանի համար: Կաղապարն ընդհանուր է զարգացած բոլոր լեզուների համար, դրսևորվում է տվյալ լեզվի բառակազմական հնարավորություններին հատուկ եղանակներով, այն կարելի է դասել լեզվական հանրությունների թվին: Բերենք ռուսերեն ու անգլերեն տարբերակներ՝ **по словам, according to the speaker (...ի խոսքերով), ранее, previously (ավելի վաղ), в центре внимания (событий), in the spotlight (limelight) (ուշադրության (իրադարձությունների) կենտրոնում)** և այլն: Լեզվական պատրաստի այս միավորների դերը չափազանց մեծ է նախադասություններն սկսելիս, նախադասություններն ու պարբերությունները կապելիս: Դրանց օգտագործումը թերթի լեզվին տալիս է պաշտոնական ոճին բնորոշ առավելագույն ճշգրտություն մտքի արտահայտման մեջ:

Չնայած պատրաստի այս կառույցները լրագրի լեզվի մշակվածության չափանիշ են դիտարկվում, դրանց անհիմն առատությունն էլ կարող է վնասել այդ լեզուն: Ահա թե ինչու որոշ հեղինակներ կաղապարը ոճական թերություն են համարում՝ նկատելով, որ բառական կրկնությունները թուլացնում են խոսքի ազդեցությունը, բացի այդ՝ լեզվական այդ միավորներին են դիմում ծուլանալով և բավարար չափով բառապաշար չունենալու դեպքում: Մեխանիկական այդ կրկնությունները ստեղծագործության առաջին և գլխավոր թշնամին են¹⁶: Ռուս լեզվաբան Գ. Սոլգանիկը կաղապարը թերություն է համարում՝ զրո արտահայտչականությամբ¹⁷: Կաղապարների են վերածվել հաճախակի կրկնվող հետևյալ կապակցու-

¹⁵ Յ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 213:

¹⁶ Տե՛ս А. Скворцев, О канцеляризмах и штампах // «Русская речь», 1982, нф. 1, էջ 56:

¹⁷ Տե՛ս Г. Солганик, О закономерностях развития языка газеты в XX веке // Вестник Московского университета. Серия 10. Журналистик, 2002, нф. 2. էջ 39-53:

թյունները՝ ընդհանուր առմամբ, չգիտես ինչու, դատե՛ք ինքներդ, արի ու տես, ինչպես ասացի, ինչպես գիտեք, չմոռանամ նշել, ճիշտն ասած, կապ չունի, պատկերավոր ասած, լավ կլիներ, ուշադրություն դարձրեք: Հաճախադեպ են բարդ ստորադասականների գերադաս եզրի հետևյալ ստորոգյալները՝ կարծում եմ, գտնում եմ, պնդում եմ, վստահ եմ, հայտարարում եմ, հարկ եմ համարում հիշեցնել, հուսանք, հիշեցնենք, չեմ կասկածում, պնդում եմ, պարզվեց, որոշվեց, պարզվել էն այլն: Այս միավորները, հաճախ շրջանառվելով, աստիճանաբար կայունանում են բառապաշարում, դրան նպաստում են նաև արտալեզվական գործոնները՝ գիտատեխնիկական հեղափոխությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը:

Եզրակացություն

Չանգվածային լրատվամիջոցների լեզվի անկապտելի տարրն է կադապարը՝ կայունություն բերող բառ կամ բառակապակցություն, որի կիրառությամբ կամայական իրագեկություն փոխանցվում է արագ ու սեղմ: Էլեկտրոնային թերթերի բնույթը թելադրում է կիրառվող բառապաշարի առավելագույն կադապարայնացում: Այդ միավորների տեղին գործածությունը նպաստում է տեղի ու ժամանակի տնտեսմանը, զանգվածային հաղորդակցության դյուրացմանը: Հաճախակի կիրառությամբ լրագրային լեզվում կայունացած այդ կադապարները՝ դրսևորված քերականական տարբեր հարաբերություններ արտահայտող ձևերով, հավաստիություն են հաղորդում նյութին, մատչելի դարձնում դրա ընկալումը տարասեռ լսարանին: Լրագրային կադապարները ժամանակի պահանջ են. դժվար է գրել արագ՝ չօգտվելով նման միավորներից, վերջապես, կադապարայնացման հնարավորություններով կարելի է բնորոշել նաև տվյալ լեզվի ճկունությունն ու մշակվածությունը:

Գրականություն

1. Ավետիսյան Յ. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016:
2. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Երևան, 1990:
3. Դավթյան Յ., Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Երևան, 2006:
4. Խաչատրյան Ա., Էլեկտրոնային մամուլի հրապարակումների վերնագրերի լեզվական առանձնահատկությունները // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 1(54), Երևան, 2020, էջ 73-85:
5. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:
6. Ղուկասյան Հ., Արդի մամուլի լեզուն, Ատենախոսություն, Ե., 2009:
7. Մայեր Վ., Լրագրային գործ, Երևան, 2001:
8. Շալունց Ռ., Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Երևան, 1987:
9. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
10. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
11. Ջահուկյան Գ., Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003:
12. Մարգարյան Լ., ԶԼՄ-ների լեզուն և արդի հայերենի բառապաշարի զարգացման միտումները // ԲԵՀ, 2020, 2 (32), էջ 83-92:
13. Балли Ш., Французская стилистика, М., 1961.
14. Винокур Г., Язык нашей газеты// М., ЛЕФ 1924, но. 2(6), стр. 117-140.
15. Костомаров В., Русский язык на газетной полосе: Некоторые особенности языка современной газетной публицистики, М., 1971.
16. Лысакова И., Журналист, пресса, аудитория // Межвузовский сборник, Ленинград, 1991, Изд-во ЛГУ. – С. 67–77.
17. Скворцев А., О канцеляризмах и штампах // «Русская речь», 1982, Но. 1, с. 56:
18. Солганик Г., О закономерностях развития языка газеты в XX веке // Вестник Московского университета. Серия 10. Журналистика. М., 2002. – №2. – С. 39-53.

Готовые словарные шаблоны в языке электронной прессы

Ануш Хачатрян

Резюме

Ключевые слова. журналистский стандарт, штамп, медиа, цифровая речь, публицистический стиль, устойчивые нефигуральные фразы, составные имена

В наши дни электронная пресса в значительной степени удовлетворяет информационные потребности общества. Для публицистического стиля характерно сочетание информации и воздействия, и если для воздействия используется эмоциональный язык, то при выполнении информационной функции возникает потребность в более нейтральных формулировках, и в этом случае невозможно избежать готовых шаблонов. Неотъемлемой частью языка СМИ является шаблон, слово или фраза, обеспечивающий стабильность любой информации, которая передается быстро и лаконично. Природа электронных газет диктует максимальную стандартизацию используемого словарного запаса. Лаконичность, передача полной информации несколькими словами, склонность современного читателя опускать крупномасштабные материалы делают неизбежным использование готовых единиц в цифровой речи. Эти стереотипы, часто используемые в журналистском языке, выражаются в различных грамматических связях, повышают доверие к материалу и делают его доступным для разнообразной аудитории. Шаблон (по словам, ранее, в центре внимания (события) и т. д.) является общим для всех развитых языков, выражается способами, специфичными для словообразовательных возможностей данного языка. Роль этих готовых единиц очень важна при начале предложения, соединении предложений и абзацев. Шаблоны газет – это требование времени. Без таких структур сложно писать быстро.

Ready-made Expressions in Electronic Press Language

Anoush Khachatryan

Summary

Key words: *journalistic standard, phrase, media, digitized speech, publicistic style, non-redefined stable phrases, compound names*

Nowadays, the electronic press largely satisfies the information needs of society. The publicistic style is characterized by the combination of information and influence, and if emotional language is used for the influence, then performing the information function, there is a need for more neutral formulations, and in this case, it is impossible to avoid ready-made word templates. An integral part of media language is a phrase ensuring the stability of any information that is transmitted quickly and concisely. The nature of electronic newspapers dictates the maximum standardization of the vocabulary used. Conciseness, conveying complete information in a few words, the tendency of the modern reader to omit large-scale materials make the use of ready-made units in digital speech inevitable. These stereotypes, often used in journalistic language, are expressed in different grammatical relations, increase the credibility of the material and make it accessible to a diverse audience. Ready-made expressions (according to the speaker, previously, in the spotlight (limelight) etc.) are common to all developed languages and are expressed in ways specific to the derivational capabilities of a given language. The role of these ready-made units is very important when starting a sentence, connecting sentences and paragraphs. Newspaper phrases are a requirement of the times. It is difficult to write quickly without such structures.

Ներկայացվել է 21.08.2021 թ.

Գրախոսվել է 29.08.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.